ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՃՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ն. Ռ. Եղիազարյան

Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների
թիվ 2 հատուկ (օժանդակ)
դպրոցի տնօրեն

Հանգուցային բառեր և արտահայտություններ. լսողության խանգարումներ ունեցող երեխաներ, գրաճանաչության ուսուցման մեթոդիկա, գրաճանաչության ծրագիր, հատուկ և ներառական կրթություն իրականացնող դպրոցներ:

Նորություն չի լինի նշել, որ ուսումնական ծրագիրն այն կարևորագույն պետական փաստաթուղթն է, որի հիման վրա կազմակերպվում է ուսուցման գործընթացը: Ինչպես վկայում են գրականության տվյալները, լսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման համար հատուկ ծրագրեր եղել են դեռևս 1929 թվականից [5,6,7], որոնք ներառել են նախապատրաստական և բարձր դասարանների ուսումնական ծրագրերի նյութերը: Գրականության տվյալները վկայում են նաև, որ լսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման հարցերը թեև միշտ էլ եղել են հեղինակների ուշադրության կենտրոնում [2,3,4], սակայն զուտ գրաճանաչության ուսուցման հարցերը շատ քիչ են ուսումնասիրված նրանց կողմից, իսկ եղած նյութերն արդեն չեն համապատասխանում ժամանակի պահանջներին:

Ցավոք, այսօր մեր հանրապետությունում հատուկ կրթության ոլորտում տարբեր պատճառներով չի իրականացվում նախադպրոցական պարտադիր ուսուցում. <<…այսօր հանրապետությունում չեն գործում հատուկ նախադպրոցական հաստատություններ, այլ կան միայն որոշ ներառական մանկապարտեզներ, որտեղ կազմակերպվում է այս երեխաների դպրոցական ուսուցման նախապատրաստական գործընթացը>> [1]:

Ահա թե ինչու, չկան նաև լսողության խանգարումներով երեխաների նախապատրաստական դասարանի համար անհրաժեշտ ուսուցման մյուս պայմանները. չեն գործում հատուկ մանկապարտեզներ, ուրեմն և՝ չկան մշակված հատուկ ծրագրեր ու մեթոդիկա: Համապատասխան գրականության և ծրագրի բացակայությունը հանգեցնում են նրան, որ ներկայումս հատուկ դպրոցի դասվարներն ու դաստիարակները գրաճանաչության ուսուցման ժամանակ հենվում են սե-

փական աշխատանքային փորձի և գիտելիքների վրա: Այս ամենն, անշուշտ, խոչընդոտ է լսողության խանգարումներ ունեցող երեխաների գրաճանաչության ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման:

Վերոնշյալը վկայում է, որ նման երեխաների համար գրաճանաչության ծրագրի մշակումը արդիական խնդիր է, ունի տեսական, գործնական և սոցիալական կարևոր նշանակություն: Հաշվի առնելով այդ հիմնական դրույթները, լսողության խանգարումներ ունեցող երեխաների գրաճանաչության ուսուցման համար մշակել ենք նոր ծրագիր: Այն նախատեսված է հատուկ և ներառական կրթություն իրականացնող դպրոցներում լսողության խանգարումներով երեխաների հետ աշխատող մանկավարժների, սուրդոմանկավարժների, դաստիարակների, ծնողների, ինչպես նաև սուրդոմանկավարժության բաժնի ուսանողների համար:

Ծրագրում ներկայացված են այն գիտելիքները, որոնց պետք է տիրապետի դպրոցին նախապատրաստվող երեխան: Ըստ այդ չափանիշների պետք է ունենան ուսուցիչների և ընկերների հետ բանավոր և մատնախոսությամբ հաղորդակցվելու տարրական հմտություններ, հասկանան իրենց ուղղված խոսքը և կատարեն առաջադրանքը, հասկանան հարցերը, կարողանան հաղորդել առաջադրանքի կատարման և սեփական ցանկությունների մասին, խնդրանքով կամ հարցով դիմել ուսուցչին և ընկերներին (և ուսուցչի օգնությամբ, և ինքնուրույն), իմանան առարկաների, գործողությունների պարզ անվանումները (ըստ բառատետրի), կարողանան կտրտած այբուբենից կազմել բառեր և արտահայտություններ, իմանան փոքրատառերի և մեծատառերի գրությունը, տպագիր և ձեռագիր տառերի համապատասխանությունը, կարողանան գրել և կարդալ տառերը, առանձին բառեր և 2-3 բառից կազմված հասարակ արտահայտություններ:

Ընդհանուր պահանջներից և չափանիշներից բացի, ծրագրում ներկայացված են երեխաների հետ առաջին իսկ օրվանից տարվող աշխատանքների ձևերն ու մոտեցումները: Նկատի ունենալով նախապատրաստական դասարանի երեխաների տարիքային առանձնահատկություններն ու հետաքրքրությունների շրջանակը, որպես դասի հիմնական ձև առաջարկվել է խաղը: Խաղի կիրառումը ստեղծում է այնպիսի պայմաններ, որտեղ երեխաներն արագ մտերմանում են միմյանց, շփվում, իսկ դա արդյունավետ միջոց է հոգեկան գործընթացների և խոսքային հաղորդակցման ձևավորման համար:

Ծրագիրը ներկայացված է աղյուսակի տեսքով (աղյուսակ 1), որտեղ սյունակներով տրված են թեմա, խնդիրներ, գործողություններ, խոսքային նյութ, զննական նյութ և ակնկալիքներ բաժինները: Յուրաքանչյուր բաժնի պարզ շարադրանքը, մեր կարծիքով, բավականին կհեշտացնի մանկավարժի աշխատանքը:

Թեմա բաժնում մանրամասն ներկայացված է ծրագրի բովանդակությունն ըստ գրաճանաչության ուսուցման շրջանների՝ նախաայբբենական և այբբենական: Նախաայբբենական շրջանում նախատեսված են երեխաների ճանաչողական հմտությունների, մանր մոտորիկայի, էջում կողմնորոշվելու, ներկելու, գծելու, նկարելու, բառերը և նկարները ճանաչելու կարողությունների զարգացմանը, ինչպես նաև բառապաշարի հարստացմանը նպաստող թեմաներ:

Գրաճանաչության այբբենական

շրջանը ներառում է տառերի գրուսուցումը: Տառերի հաջորդականության ընտրության ժամանակ հաշվի է առնվել դրանց հեշտ արտաբերումը և շտկողական պարապմունքներին այդ հնչյունների դրման հաջորդականությունը: Մատչելիության սկզբունքին համապատասխան, նախ ընդգրկվել են պարզ հնչողություն ունեցող տառերը, դրանցով կազմված վանկերն ու բառերը: Տառերի գրուսուցումը նպատակ ունի երեխաների մեջ ձևավորելու տառերը (տպագիր և ձեռագիր) առանձին, բառասկզբում, բառամիջում և բառավերջում ճանաչելու, արտաբերելու, ուսուցչի շուրթերից կարդալու, տետրում կոկիկ գրելու, կտրտած այբուբենով վանկեր, բառեր կազմելու, դրանք կարդալու կարողությունների զարգացում:

Խնդիրներ բաժնում տրված են յուրաքանչյուր թեմայի ուսուցողական, դաստիարակչական և շտկողական խնդիրները: Ուսուցողական խնդիրներն են տառերը ճանաչելը, գրելը, կարդալը, արտաբերելը, շուրթերից կարդալը, բառերը վերլուծելն ու համադրելը, բառապաշարի հարստացումը: Դաստիարակչական խնդիրներից են սեղանի մոտ ճիշտ կեցվածքով նստելը, մատիտը, գրիչը ճիշտ բռնելը, ուշադիր լինելու, խոսողին հետևելու, անհատական և խմբային աշխատելու կարողությունների զարգացումը: Շտկողական խնդիրներից է դրված հնչյունների ճիշտ արտաբերմանը հետևելը՝ առանձին, վանկերում և բառերում:

Գործողություններ բաժնում մանրամասնած է այն գործողությունների շարքը, որով հնարավոր կլինի իրագործելու վերը նշված խնդիրները: Այսինքն՝ դասի ամբողջական կառուցվածքը, ըստ որի հստակ երևում է՝ ինչպես սկսել յուրաքանչյուր դաս, ինչ ընթացք տալ և ինչպես ավարտել: Պետք է նշել, որ նյութը հետաքրքիր ու բազմազան դարձնելու համար աշխատել ենք յուրաքանչյուր դաս կառուցել յուրովի այնպես, որ երեխաներն ինքնուրույն տրամաբանելու, երևակայելու, իրենց համար նոր բան հայտնաբերելու ու եզրահանգումներ անելու հնարավորություն ունենան: Ուստի, յուրաքանչյուր տառի ուսուցման համար ներկայացվել է համապատասխան խաղ: Տրվել է խաղի վերնագիրը, նպատակն ու անցկացման կարգը:

Խոսքային նյութ բաժնում տրված է նորածանոթ բառերի շարքը: Դրանք ստույգ թեմայից բխող բառերն են: Ուսուցիչը դրանք պետք է գրի գրատախտակին, ցույց տա բառաքարտերով, բացատրի, ապա կազմեն այդ բառերը կտրտած այբուբենով, մատնախոսեն, կարդան, արտաբերեն և այլն: Այսինքն, դրանք այն հենակետային բառերն են, որոնց շուրջ պետք է պտտվի դասի ասելիքը:

Զննական նյութ բաժնում ներկայացված են դասի վարման, ուսումնական նյութի մատուցման համար անհրաժեշտ զննական նյութերը: Դրանք դարձյալ ելնում են յուրաքանչյուր թեմայի խնդիրներից: Որպես զննական նյութ, տարբեր դասերի համար առաջարկվել են հայերենի և մատնախոսության այբուբենները, մեծ և փոքր տառադարաններ, նկարազարդ տառապաստառներ, բառաքարտեր, լոտոներ և այլ խաղեր:

Ակնկալիքներ բաժինն արտացոլում է այն ամենն, ինչ պետք է իմանա և կարողանա լսողության խանգարումով երեխան յուրաքանչյուր դասից հետո:

Աղյուսակ 1

Ծրագրի կառուցվածքը մեկ դասի օրինակով.

ԹԵՄԱ	ԽՆԴԻՐՆԵՐ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԽՈՍՔԱՅԻՆ ՆՅՈՒԹ	ՁՆՆԱԿԱՆ ՆՅՈՒԹ	ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ
մ,Մ տառի գրուսուցում	Սովորեցնել ճանաչել մ տառը վանկի սկզբում և վերջում, բառերի սկզբում, բառամիջում և բառավերջում, ձևավորել մատնախոսելու, շուրթերից կարդալու, վանկերը համադրելով բառեր կազմելու կարողություն: Ուսուցանել մ, Մ տառերի գրությունը: Զարգացնել ուշադրությունը, հիշողությունը, երևակայությունը: Հետևել նստելու, գրելու ճիշտ կեցվածքին, հնչյունի, վանկերի ու բառերի ճիշտ արտաբերմանը:	Եզրագծով կտրել մ, Մ տառերի պատկերները: Գտնել մ, Մ տառերը մեծ և փոքր տառադարաններում, կարդալ, մատնախոսել, արտաբերել: Կատարել հնչյունային ռիթմիկա (մո՛ւ-մո՛ւ, մա՛- մա՛. ուսուցիչը ցույց է տալիս համապատասխան նկարներ): Բառային աշխատանք. բառային վերլուծության և համադրության համար կազմակերպել հետևյալ խաղերը. <<Գտի՛ր ընկերներիդ>> Խաղը նախատեսված է միավանկ բառեր կազմելու համար: Աշակերտները տառադարանից մեկական տառ ստանալով ուսուցչից, պետք է իրար կողք կանգնեն այնպես, որ կազմեն նորածանոթ բառերը: <<Գտի՛ր զույգիդ>> Աշակերտները շարվում են իրար կողք, բաժանվում են A4 չափի թղթի վրա գրված վանկեր՝ տիտ, մա, ա, տամ, միս և այլն: Ուսուցիչն անվանում է որևէ վանկ: Այդ վանկն ունեցող աշակերտը դուրս է գալիս շարքից և փնտրում իր զույգին, օր՝ մա վանկն ունեցողը պետք է շարքից դուրս բերի տիտ վանկին և իրար կողք կանգնելով՝ կազմեն մատիտ բառը: Նույն ձևով համադրում են մյուս վանկերը և կարդում: մ,Մ տառերի գրուսուցում. Սովորեցնել գրել նախ թելով, փափուկ մետաղալարով, ավազով կամ այլ նյութերով, օդում, ապա կավիճով՝ մեծ և փոքր գրատախտակներին և նոր միայն՝ տետրում:	Մատ, մատիտ, մատանի, միս, ամիս, մուկ, մոմ, ատամ	Մատնախոսության այբուբեն, մեծ և փոքր տառադարաններ, խոսքային նյութին համապատասխան նկարներ, բառաքարտեր, վանկերով քարտեր, նկարազարդ տառապաստառ	Երեխաները պետք է ճանաչեն տպագիր և ձեռագիր մ, Մ տառերը բառի տարբեր մասերում, կարողանան ճիշտ մատնախոսել, արտաբերել այդ հնչյունը և դրանով կազմված վանկերն ու բառերը, իմանան թեմայի բառերը, կարողանան դրանք բաժանել վանկերի և հակառակը՝ վանկերը միացնելով կազմեն այդ բառերը և գրեն գեղեցիկ:

Ծրագիրը ներդրվել է Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրում 2011-2012 ուսումնական տարում և փորձարարությամբ հիմնավորվել է դրա արդյունավետությունը::

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սվաջյան Ա. Հ., Սահմանափակ կարողություններով նախադպրոցականների դպրոցական ուսուցման նախապատրաստման գործում խոսքի զարգացմանն ուղղված մանկավարժական մոտեցումներ //Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն: Միջբուհական գիտամեթոդական հոդվածների ժողովածու, Երևան, 2008, N7, էջ 60-68:

2. Головчиц Л. А., Дошкольная педагогика, М., 2010, 319 с.

3. Зыков С. А., Обучение глухонемых детей грамоте, М.-Л., 1947, 160 с.

4. Красильникова О. А. Обучение чтению школьников с нарушениями слуха, М., 2005, 272 с.

5. Программы специальных общеобразовательных школ для глухих детей. Москва, 1995.

РЕЗЮМЕ

СОДЕРЖАНИЕ ПРОГРАММЫ ОБУЧЕНИЯ ГРАМОТЕ ДЕТЕЙ С НАРУШЕНИЕМ СЛУХА

Н. Р. Егиазарян

директор специальной (вспомогательной) школы N2
для детей имеющих нарушения интеллекта

В статье представлено содержание рекомендованной нами примерной программы обучения грамоте детей с нарушением слуха. Расскрываются разделы программы, темы занятий, задачи, действия, речевой и дидактический материал и др.

SUMMARY

The CONTENT OF LITERACY TEACHING PROGRAM FOR CHILDREN WITH HEARING IMPAIRMENTS

N. R. Yeghiazaryan

The content of teaching program for children with hearing Impairments is represented in the article. The following parts of the program are examined: the themes, tasks, activities, verbal and didactic material, expectations.